ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) ստորագրվել է 2024 թ. ապրիլի 15-ին ք. Երևանում:

Փաստաթղթով իրավական կանոնակարգում են ստանում Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների այցելություններն ու գտնվելու ռեժիմը:

Ակնկալվում է, որ ուժի մեջ մտնելուց հետո համաձայնագրի դրույթները երկու պետությունների քաղաքացիներին, վավերական ճամփորդական փաստաթղթի առկայության պարագայում, կտան մյուս պետություն մուտք գործելու, դուրս գալու, տարանցմամբ անցնելու, տեղաշարժվելու և պետական սահմանը հատելուց մինչև 90 օրվա ընթացքում վերջինի տարածքում գտնվելու հնարավորություն:

Միևնույն ժամանակ, համաձայնագիրը կազատի մի կողմի տարածքում ժամանակավորապես գտնվող՝ մյուս կողմի քաղաքացիներին մուտքի պետության իրավասու մարմիններում 30 օրվա ընթացքում ըստ գտնվելու վայրի հաշվառվելու պարտավորությունից:

Հատկանշական է, որ խնդրո առարկա միջազգային պայմանագիրը չի սահմանափակում կողմերից յուրաքանչյուրի իրավունքը՝ մերժել մյուս կողմի այն քաղաքացիների մուտքը, որոնց ներկայությունն իր տարածքում ցանկալի չէ:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում է 2006 թվականի նոյեմբերի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև՝ քաղաքացիների փոխադարձ այցելությունների մասին» համաձայնագրի գործողությունը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հայտնել է, որ Համաձայնագիրը չի պարունակում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր: Միաժամանակ հայտնել է, որ Համաձայնագիրը ենթակա է վավերացման ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետերով, իսկ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսելու դեպքում Համաձայնագիրը ենթակա կլինի վավերացման նաև ՀՀ

Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետերով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ համաձայնագրում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասով Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիներին կացության ժամանակավոր կարգավիճակ և կացության քարտ տալու, ինչպես նաև հաշվառելու համար սահմանված է պետական տուրք՝ Համաձայնագրով Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների համար մինչև 30 օր ժամկետով Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում հաշվառման պահանջի վերացումը կարող է հանգեցնել պետական տուրքի գծով ՀՀ պետական բյուջեի եկամուտների նվազեցման:

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեն հայտնել է, որ համաձայնագով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի կարգավորման շրջանակում Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև կարևորելով Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև քաղաքացիների փոխայցելությունների խթանումը, 2024 թվականի ապրիլի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ղազախստանի Հանրապետության Կառավարության միջև քաղաքացիների այցելությունների և գտնվելու կարգի մասին» համաձայնագրի վավերացումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից նպատակահարմար է:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ